

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1**

**ԳՊՄԻ պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի 29. 08. 2014թ. նիստի՝**

**մասնակցությամբ խորհրդի 15 անդամների,**

**նախագահությամբ դեկան Ս.Հայրապետյանի**

**ՕՐԱԿԱՐԳ - 1. Պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի 2014-2015**

**ուստարվա աշխատանքային պլանի հաստատում**

**2. Ըստ կուրսերի ֆակուլտետի 2014-2015 ուստարվա ուսումնա-**

**կան գործընթացի իրականացման ժամանակացույցի մասին**

**3. Ֆակուլտետի 2014-2015 ուստարվա մանդատային հանձնա-**

**ժողովի կազմի հաստատում**

**4. Ընթացիկ հարցեր**

**ԼՄԵՑԻՆ -** Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը պատմաբանասիրական

ֆակուլտետի խորհրդի 2014-2015 ուստարվա աշխատանքային պլա-

նի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Մ.Խաչատրյան, Ա.Նորիկյան, Ս.Մելքոնյան, Գ.Խաչիկյան

**ՈՐՈՇԵՑԻՆ -** Հաստատել պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի

2014-2015 ուստարվա հետևյալ աշխատանքային պլանը.

օգոստոս /մինչև 29/

1. Ֆակուլտետի խորհրդի 2014-2015 ուստարվա աշխատանքային

պլանի հաստատում:

2. Ֆակուլտետի ուսումնական պրոցեսի իրականացման

ժամանակացույց ըստ կուրսերի:

3. 2013-2014 ուստարվա ֆակուլտետի մանդատային

հանձնաժողովի /ուսման զեղչեր, կրթաթոշակ, փոխատեղում/

կազմի հաստատում:

4. Ընթացիկ հարցեր:

Սեպտեմբեր /15-30/

1. 2014-2015 ուստարվա ուսանողների /առկա, հեռակա/

պրակտիկայի վայրերի հաստատում:

2. Ուսումնական խորհրդատուների հաստատումը՝ ըստ կուրսերի /պայմանավորված ուսանողների քանակով/:
3. Մասնագիտական ամբիոնների 2013-2014 ուստարվա հաշվետվություններ:
4. Ընթացիկ հարցեր:

Հոկտեմբեր /15-30/

1. Ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվություն /վերլուծություն/:
2. Առկա համակարգի ուսանողների առաջին կիսամյակի կուրսային աշխատանքների հաստատումն ըստ ուսանողների:
3. Առկա համակարգի ուսանողների առաջին միջանկյալ ստուգումների հարցատոմսերի հաստատում:
4. Առկա չորրորդ կուրսերի մանկավարժական /արտադրական/, ուսումնական պրակտիկաների անցկացման վայրերի հաստատում՝ ըստ ուսանողների եւ դասախոսների:
5. Ընթացիկ հարցեր:

Նոյեմբեր /25-30/

1. Հեռակա համակարգի ուսանողների փոխադրականի քննարկում:
2. Հեռակա համակարգի ուսանողների ուսանողական նպաստի մասնակի փոխհատուցման քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

Դեկտեմբեր /15-20/

1. Առկա համակարգի ուսանողների առաջին կիսամյակի երկրորդ միջանկյալ ստուգման հարցաշարերի հաստատում:
2. Մագիստրոսական թեզերի թեմաների հաստատումն ըստ մագիստրոսների, դասախոսների:
3. Առկա համակարգի ուսանողների ամփոփիչ քննության

հարցատոմսերի հաստատում:

4. Ընթացիկ հարցեր:

Հունվար /15-20/

1. Հեռակա համակարգի ուսանողների ամփոփիչ քննությունների հարցատոմսերի հաստատում:

2. Հեռակա համակարգի հինգերորդ կուրսի ուսանողների մանկավարժական /արտադրական/, ուսումնական պրակտիկաների անցկացման վայրերի հաստատումն ըստ ուսանողների:

3. Ընթացիկ հարցեր:

Փետրվար /15-30/

1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների հաստատումն ըստ ուսանողների:

2. Ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերի եւ հարցատոմսերի հաստատում:

3. Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփումն ըստ առաջադիմությունների /առաջադիմող, փորձաշրջանում գտնվող, հեռացման ենթակա/:

4. Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի կիսամյակային հաշվետվություն:

5. Ընթացիկ հարցեր:

Մարտ /20-30/

1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների հաստատումն ըստ ուսանողների դասախոսների:

2. Առկա համակարգի երկրորդ կիսամյակի առաջին միջանկյալ ստուգումների հարցատոմսերի հաստատում:

3. Առկա համակարգի երրորդ կուրսի մանկավարժական /ուսումնական /, արտադրական պրակտիկաների անցկացման

վայրերի հաստատումն ըստ ուսանողների:

4. Ուսանողական հանրապետական գիտական նստաշրջանի աշխատանքների կազմակերպում:
5. Ընթացիկ հարցեր:

Ապրիլ /25-30/

1. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի ներկայացումն ու հաստատումն ըստ մասնագիտությունների ուսման ձեւերի:
2. Ընթացիկ հարցեր:

Մայիս /15-30/

1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի երկրորդ միջանկյալ ստուգումների հարցատոմսերի հաստատում:
2. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի ամփոփիչ ստուգումների հարցատոմսերի հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Հունիս /5-15/

1. Հեռակա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի քննատոմսերի հաստատում:
2. Ընթացիկ հարցեր:

Հուլիս /5-10/

1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում /ըստ ամբիոնների ուսումնական խորհրդատուների վերլուծության/:
2. Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի տարեկան հաշվետվություն:
3. Ամբիոնների տարեկան հաշվետվություն:
4. Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ** - դեկան Ս. Հայրապետյանի եւ մասնագիտական ամբիոնների վարիչներ Գ.Խաչիկյանի, Ե.Վարդանյանի ու Մ.Խաչատրյանի հաղոր-

դումները 2014-2015 ուստարում ֆակուլտետի ուսումնական գործընթացի իրականացման ժամանակացույցի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ս.Կուրազյան, Գ.Համբարյան, Ա.Մնացականյան, Ա.Հովհաննիսյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հաստատել ֆակուլտետի 2014-2015 ուստարվա ուսումնական գործընթացի իրականացման ժամանակացույցը /տե՛ս կից/:

**ԼՄԵՑԻՆ** - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը պատմաբանասիրական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա մանդատային հանձնաժողովի կազմի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**- Մ. Խաչատրյան, Ա.Նորիկյան, Ս.Մելքոնյան,Գ.Խաչիկյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** - 1. Ստեղծել ուսանողական նպաստների, պետական եւ ներքուհական կրթաթոշակների հատկացման 2014-2015ուստարվա ֆակուլտետային /մանդատային/ հանձնաժողով՝ հետեւյալ կազմով.

1. Ս.Հայրապետյան - պատմաբանասիրական ֆակուլտետի դեկան, հանձնաժողովի նախագահ
2. Մ.Խաչատրյան հայոց լ. եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, անդամ,
3. Գ.Խաչիկյան - հայ գրականության, նրա դասավանդման մեթոդիկայի եւ լրագրության ամբիոնի վարիչ, - // -,
4. Ե.Վարդանյան - պատմության, իրավագիտության եւ նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ, - // -,
5. Ա. Մնացականյան - ֆակուլտետի ուսխորհրդի նախագահ, - // -

2. Միջնորդել ռեկտորատին՝ հաստատելու ֆակուլտետային /մանդատային/ հանձնաժողովի 2014-2015 ուստարվա վերոնշյալ կազմը:

**ԼՄԵՑԻՆ** - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ֆակուլտետի խորհրդի կազմի ռոտացիայի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Մ.Խաչատրյան, Բ.Վարդանյան, Գ.Հարությունյան, Ա.Հովհաննիսյան, Ա.Մնացականյան

**ՈՐՈՇԵՑԻՆ-1.** Բաց քվեարկությամբ ֆակուլտետի խորհրդի կազմից դուրս բե-

րել խորհրդի ուսանող անդամներ՝ շրջանավարտ մագիստրանտներ  
Ն.Իսրայելյանին, Ս.Գեւորգյանին, Ս.Վարդանյանին եւ նրանց փոխա-  
րեն ուսխորհրդի առաջարկությամբ ֆակուլտետի խորհրդի կազմում  
ընդգրկել ուսանողներ Ա.Վարդանյանին /հլգ 4-րդ կ./, Ն.Խաչատրյա-  
նին /մագ. իր. 1-ին կ./ եւ Ա.Մնոյանին /իր. 4-րդ կ./:

2. Ռեկտորի հաստատմանը ներկայացնել ֆակուլտետի խորհրդի  
հետեւյալ կազմը.

1. Ս.Հայրապետյան- ֆակուլտետի ղեկան, խորհրդի նախագահ,

2. Գ.Խաչիկյան - հայ գրակ, նրա դաս. մեթոդիկայի եւ լրագրության  
ամբիոնի վարիչ, անդամ

3. Ե.Վարդանյան - պատմ. եւ իրավ. եւ դաս. մեթոդիկաների ամբիոնի  
վարիչ, -//-,

4. Մ.Խաչատրյան - հայոց լ. եւ դաս. մեթոդիկայի ամբիոնի վարիչ, -//-,

5. Ա.Նորիկյան - լրագր. սեկտորի վարիչ, -//-,

6. Ա.Հովհաննիսյան - ֆակուլտետի արհկոմի պատասխանատու, -//-,

7. Ա.Մնացականյան - ակուլտետի ուսխորհրդի նախագահ, -//-,

8. Գ.Համբարյան - ֆակուլտետի որակի պատասխանատու, -//-,

9. Գ.Հարությունյան - Գյումրու թիվ 20 դպ. տնօրեն, -//-,

10 . Գ.Ալեքսանյան - Գյումրու թիվ 3 ավագ դպ. տնօրեն, -//-,

11. Գ.Կարապետյան - Գյումրու թիվ 7 դպ. տնօրեն, -//-,

12. Ս.Մելքոնյան - հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր, -//-,

13. Ն.Ավետիսյան - հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, -//-,

14. Ս.Պետրոսյան - պատմ. եւ իր ամբիոնի դոցենտ, -//-,

15. Հ. Խորիկյան - պատմ. եւ իրավ. ամբիոնի դասախոս, -//-,

16. Ս.Կուրազյան- հայ գրակ. ամբիոնի դոցենտ, -//-,

17. Ա.Վարդանյան - հլգ 4-րդ կ. ուսանողուհի, -//-,

18. Է.Չոբանյան - լրագր. 3-րդ կ. ուսանողուհի, -//-,

19. Ն. Ստեփանյան - իրավ. մագ. 1-ին կ. ուսանողուհի, -//-,

20. Ա.Մնոյան - իրավ. 4-րդ կ. ուսանող, -//:-

**ԼՄԵՑԻՆ** - Պատմաբանասիրական ֆակուլտետի դեկանատի 2014-2015 ուստար-վա աշխատանքային պլանի քննարկումը /հաղ. Ս.Հայրապետյան/:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ս.Կուրազյան, Ե.Վարդանյան, Մ.Խաչատրյան. Գ.Խաչիկյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հաստատել ատմաբանասիրական ֆակուլտետի դեկանատի 2014-2015 ուստարվա հետեւյալ աշխատանքային պլանը՝

	Միջոցառման անվանումը	Ժամկետ	Պատասխանատու անձ
1	2	3	4
1.	Ֆակուլտետի խորհրդի և դեկանատի նիստեր	ուստարվա ընթացքում պարբերաբար	Ս.Հայրապետյան
2.	Ֆակուլտետային ուսումնական խորհրդակցություն՝ ուսուցման որակի բարձրացմանը նպատակառոտ դրված ներհնատիտուտային բարեփոխումների ծրագրի վերաբերյալ	սեպտեմբեր 2014թ.	Ս.Հայրապետյան մասնագիտ. ամբիոնի վարիչներ
3.	Առաջին կուրսեցիների երդման եւ ուսանողական գրքույկների հանձնման արարողություն	հոկտեմբեր 2014.	Ս.Հայրապետյան ֆակ-ի ՈւԽ
4.	Խորհրդակցություն առաջին կուրսեցիների հետ ուսուցման կրեդիտային համակարգի առանձնահատկությունների մասին	հոկտեմբեր 2014	Ս.Հայրապետյան ֆակ-ի ՈւԽ
5.	Հանրապետական օլիմպիադաների անցկացում հայոց լեզվից, գրականությունից եւ պատմությունից	նոյեմբեր 2014	Ս.Հայրապետյան, հ. լեզվի և հայ գրականության, պատմ. ամբիոններ
6.			
7.	Ֆակուլտետային երեկո 88-ի երկրաշարժի 25 - ամյակի կապակցությամբ	դեկտեմբեր 2013թ.	Ս.Հայրապետյան Գ.Խաչիկյան, Ն.Ավետիսյան
8.	Տարեմուտի ֆակուլտետային երեկո	դեկտեմբեր 2014.	Ս.Հայրապետյան

			Ֆակ-ի ՈւԽ
7.	Ֆակուլտետի առկա ուսուցման ընթացիկ ստուգումների. քննաշրջանների և լուծարքների կազմակերպում	ուստարվա ընթացքում	Ս.Հայրապետյան մասնագիտ. ամբիոնի վարիչներ
8.	Ֆակուլտետի հեռակա ուսուցման կիսամյակային դասագործընթացի և քննաշրջանների ու լուծարքների կազմակերպում	նոյեմբեր 2013, հունվար, ապրիլ, հունիս 2014.	Ս.Հայրապետյան մասնագիտ. ամբիոնի վարիչներ
9.	Թատրոնի ավանդական օր ֆակուլտետում	նոյեմբեր 2014. ապրիլ 2015.	Ս.Հայրապետյան ֆակուլտետի ՈւԽ
10	Աշակերտական ընթերցումներ՝ «Մեծ եղեռնի արձագանքները» թեմայով՝ մարզի դպրոցների թիմերի մասնկցությամբ	մարտ, 2015	Պատմ. եւ իրավագիտ. ամբիոն
11	Ֆակուլտետային թիմերի մասնակցություն ներինստիտուտային մարզական խաղերին	ուստարվա ընթացքում	ֆակուլտետի ՈւԽ ֆիզդաստ. ամբիոն
12	Մոմավառություն Մբ Հակոբ եկեղեցու բակում՝ նվիրված Եղեռնի զոհերի հիշատակին և դասախոսություն <Մեծ եղեռնի պատմական դասերը> թեմայով	ապրիլ 2014.	ֆակուլտետի ՈւԽ, Ս.Հայրապետյան
13	Հանդիպում «Արտույտների ագարակը» վեպի հեղինակ Անտոնիո Արսլանի հետ եւ Ֆաբիանի եղբայրների համանուն ֆիլմի ցուցադրում	ապրիլ 2014	Ս.Հայրապետյան, Գ.Խաչիկյան, ֆակուլտետի ՈւԽ
12	Պետական ավարտական քննաշրջանի կազմակերպում եւ անցկացում	մայիս 2014	Ս.Հայրապետյան
14	Շրջանավարտի օրվա կազմակերպում եւ դիպլոմների հանձնման արարողություն	Հունիս 2014	Ս.Հայրապետյան ֆակուլտետի ՈւԽ,
15	Թեմատիկ դասախոսություններ՝ նվիրված հայ գրականության, լեզվի, պատմության հիմնախնդիրներին	ուստարվա ընթացքում	Մասնագիտ. ամբիոնների վարիչներ

խորհրդի նախագահ՝  
 ֆակուլտետի դեկան  
 նիստի քարտուղար

Ս.Հայրապետյան  
 Է.Չոբանյան